

Առօրեայ հեւք

Գիշերը՝ քնատ
 ցերեկն՝ ուժաթափ
 օրուան մէջ՝
 կայտառ, վառ ու շնչասպառ
 անխոնջ

 անդադար
 աշխոյժ

 ու տկար

կը վազեմ անսանձ
 յոզնած
 սրընթաց
 դէպի անստոյգ պահ մը փառապանձ

Մարդիկ տմարդի
 ողջերն անկենդան
 իրերն անկայուն եւ անիրական

Ժամերը հեղուկ

պղտոր

յեղեղուկ

շուրջս կը հոսին կը սահին կ'երթան

մինչ ես այս անյոյս պայքարի գերին

թէ կանխայարձակ թէ փախստական

կը վազեմ անվերջ

երագի մը մէջ

ուր ճիշդը կեղծ է եւ սուտն իսկական

Անձկութեան թաթը կոշտ ու անողոք

կը խեղդէ լարուած կոկորդս ամուր

ուր ամէն մէկ խօսք, հառաչ կամ բողոք

կուլ կու տամ ինչպէս թունաւոր մրուր

Եւ դեռ կը վազեմ

անշեղ

անյապաղ

ալացքս՝ անգուսպ

խիստ քայլերս՝ կաղ

կը վազեմ ուժգին

ինձմով առանձին

ընդդէմ ուղղութեան

ընդդէմ հոսանքին

կը վազեմ արագ

անյագ

շարունակ

դէպի խոստումներ գերագոյն ու սին

Գիշերն՝ անհանդարտ
 ցերեկը՝ ուժատ
 օրս հեք ու ցաւ
 տագնապ անընդհատ
 կը վազեմ անդուլ
 պրկուած ու թոյլ
 վիժուկ՝ էութեան երկունքին ամուլ

Օգնութեան կանչս կը դառնայ խնդուք
 յոգնութեան կաղկանձ
 չոր լաց
 հեծկլտուք
 Ստուերներ դաժան
 մղձաւանջային
 շուրջս կ'ոլորուին
 շուրջս կ'օրօրուին
 կը խաղան ինձմով անհոգ եւ դիրին
 եւ ես կը վազեմ միշտ ու անվարան
 դէպի մեկնակէտ մը յաւերժական
 Դուրսը՝ մութ ու աղտ
 ներսս՝ յոյս եւ ախտ
 ես դէռ կը վազեմ աչքերս գոցած
 հոգեպղծուած
 կոյր եւ գոյախախտ
 ես դէռ կը վազեմ
 ինքզինքս մոռցած

Մինչ դուն իմ դեմս կանգնած
 տիրուհիս
 Մարմնացած Իդևս
 տենչս
 դիցուհիս
 յուզուած կը դիտես վազքս անհնար
 տեղքայլս տենդոտ
 ջանքս ոգեսպառ
 եւ ջերմ թեւերդ ինձի երկարած
 գալս կը սպասես
 քնքուշ գիրկդ բաց

Հ. Շ.

«Անվերադարձ», Ալպարթոս Հրատարակութիւն, Արցախ, 2010

